Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի համայնքապետարան

Հասցե՝1810 , Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 8 փ. 2ենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: lermancq@mail.ru

№LՄ/LՀ2025/ 183

«29» 12 2017 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի թիվ 36, 37, 38 որոշումները, 14, 15 կարգադրությունները և համայնքի ավագանուն 34-Ա, 35-Ա, 36-Ն, 37, 38-Ա, 39, 40-Ն որոշումները:

Առդիր՝ 21 թերթ.

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«25» 12 2017թ. հհտ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34-Ա

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 25-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

Լեռնանցք համայնքի ավագանու 2017թ-ի դեկտեմբերի 25-ի նիստի

1. Լեռնանցք համայնքի 2017 թվականի համայնքային սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
2. Լեռնանցք համայքնում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարումների դրույքաչափեր սահմանելու մասին:
3. << համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 134 եզրակացությունը՝ Լեռնանցք համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում 06-040-0227-0039 կադաստրային ծածկագրի 0.02 հա մակերեսով առանձին հողակտորի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

4. Լեռնանցք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
5. ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արտուր Հարությունյանի դիմումը՝ Ֆրիդա Սուքիասյանի ընտանիքը մինչև 1988 թվականի դեկտեմբերի 7-ը ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքում քարե բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:
6. Լեռնանցքի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
7. Լեռնանցք համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝ Կողմ Դեմ Ձեռնպահ

Առաքելյան Ա.

Մանուկյան Է.

Գևորգյան Ա.

Չախոյան Ա.

Վարդանյան Ս.

Վիրաբյան Կ.

Օհանյան Յ.

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 25» 12 2017 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով.

Ավագանին որոշեց

1. Հաստատել Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի հրամանով կազմված սեփականության ամենամյա գույքագրման հանձնաժողովի կողմից անցկացված ամենամյա գույքագրման արդյունքում կազմված փաստաթղթերը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Գևորգյան Ա.			
Մանուկյան Է.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 25 » 12 2017թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 36-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնանցք համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք գյուղական համայնքում 2017

թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Գևորգյան Ա.			
Մանուկյան Է.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնանցք համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքեր

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ.

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար հարյուր դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հարյուր դրամ.

10) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ հարյուր հիսուն դրամ.

11)Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

12) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

Տեղական վճարներ

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

7) <<Սառնաղբյուր>> և <<Պայուղարա>> խմելու ջրագծից օգտվող ընտանիքներից՝ տեղական վճար մեկ ամսվա համար սահմանել մեկ հազար դրամ:

8)համայնքի կողմից աղբահանություն կազմակերպելու վճար սահմանել մեկ անձի համար ամսեկան յոթանասուն դրամ:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

«25» 12 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37

ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՎ 134 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 06-040-0227-0039 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.02 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների քաղաքշինական ծրագրերի փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 134 եզրակացությունը.

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը. համայնքային սեփականություն հանդիսացող 06-040-0227-0039 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.02 հա նպատակային գործառնական գյուղատնտեսական նշանակության արոտավայրը՝ 0.02 հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, կապի գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Գևորգյան Ա.			
Մանուկյան Է.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«25» 12 2017թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38- Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Գևորգյան Ա.			
Մանուկյան Է.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 38-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մացակյան Վոլոդյա Արեստակեսի --- 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
2. Առաքելյան Երվանդ Մերուժանի --- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
3. Մելոյան Նունիկ Հարութի --- 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
4. Մացակյան Մարինե Գարեգնի --- 35000 (երեսունհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
5. Շուշանյան Ռուզաննա Արարատի --- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
6. Մելիքսեթյան Սեդրակ Լենդրուշի --- 15000 (տասնհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
7. Վիրաբյան Լյովա Արարատի --- 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
8. Նիկողոսյան Սոֆյա Համազասպի --- 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
9. Զախոյան Լևոն Ռուդիկի --- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
10. Հարությունյան Սիրվարդ Սարգսի --- 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
11. Ղազարյան Նշան Վռամի --- 15000 (տասնհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
12. Եգիանյան Մարիետա Վաղինակի --- 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
13. Վարդանյան Արայիկ Համբարձումի --- 15000 (տասնհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
14. Թադևոսյան Մհեր Վարշամի --- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 64
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

«25» 12 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 39

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՖՐԻԴԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ՝ ՄԻՆՉԵՎ 1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը ԲՆԱԿԱՐԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 9.1 կետը և Լոռու մարզի Լեռնանցք համայնքի բնակիչ Ֆրիդա Ֆրունզերի Սուքիասյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Արտուր Հարությունյանի դիմումը՝ մինչև 1988թ-ի դեկտեմբերի 7-ը Ֆրիդա Սուքիասյանի բնակարան ունենալու փաստը հաստատելու խնդրանքի մասին: Հիմք ընդունելով Լեռնանցք համայնքի բնակիչներ Սերյոժա Վարդանյանի, Վազգեն Վիրաբյանի, Երջանիկ Սահակյանի, Սերյոժա Ավագյանի և Ֆրիդա Սուքիասյանի գրավոր և բանավոր բացատրությունները, ուսումնասիրելով դիմումին կից ներկայացրած փաստաթղթերը, Լեռնանցք համայնքի 1989-2001-2005թթ-ին կազմված անօթևանների հերթացուցակը, նկատի ունենալով, որ Լեռնանցք համայնքում մինչև երկրաշարժը կառուցվել են բնակելի տներ, սակայն այդ փաստ չեն հասցրել գրանցել երկրաշարժի հետևանքով.

Ավագանին որոշում է

Հաստատել այն փաստը, որ Լեռնանցք համայնքի բնակիչ Ֆրիդա Սուքիասյանը մինչև 1988թ-ի դեկտեմբերի 7-ը ունեցել է նորակառույց բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Գևորգյան Ա.			
Մանուկյան Է.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«25» 12 2017 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ.
գ.Լեռնանցք 8 փ. շենք 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 40-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28–րդ կետերով և "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 60-րդ, 72-րդ և 78-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնանցք համայնքի ավագանու 2016թ-ի նոյեմբերի 29-ի թիվ 27-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018թ-ի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Գևորգյան Ա.			
Մանուկյան Է.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզումյան

Հավելված
Լոռու մարզի Լեռնանցք համայնքի
ավագանու 2017թ.
սեպտեմբերի 25-ի թիվ 40-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 10

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական
Քաղաքական և հայեցողական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար	1	300000	300 000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	150000	150 000
	Ընդամենը	2	450000	450 000
Համայնքային ծառայության պաշտոններ				
3	Աշխատակազմի քարտուղար	1	135000	135000
4	Առաջատար մասնագետ	3	125000	375000
5	Առաջին կարգի մասնագետ	1	115000	115000
	Ընդամենը	5	375000	625000
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ				
6	Հավաքարար	1	80000	80000
7	Վարորդ	1	80000	80000
8	Ջրամատակարարման կարգավորող	1	124000	124000
	Ընդամենը	3	284000	284000
ԸՆԴԱՄԵՆԸ		10	1109000	1 359 000

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«25» 12 2017 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք 6/4
հեռ. 093 32 22 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 41-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ 1-ին մասի 3-րդ կետով և 55-րդ հոդվածներով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով՝

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2018 թվականի բյուջեն՝ համաձայն 1-6 հատվածների:

2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Գևորգյան Ա.			
Մանուկյան Է.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 22 » 12 2017թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ.
գ. Լեռնանցք 8 փ. 2ենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ թիվ 36

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 06-040-0227-0039 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 30.07.1990թ-ի թիվ 479 որոշմամբ հաստատված կարգով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 06-040-0227-0039 ծածկագրի 0,02հա մակերեսով հողամասին տրամադրել 11 փող. 1փկղ. թիվ 6/1 փոստային հասցեն:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«25» 12 2017թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ.
գ. Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 06-040-0003-0003 ՇԱՇԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողի սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրենքի ուժով ճանաչել 06-040-0003-0003 ծածկագրի տակ գտնվող 0.12111 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամների՝ Մարիետա Վաղինակի Եգանյանի /24/12/1965թ/, Վարդան Փայլակի Անտոնյանի /22/07/1991թ/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտի օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Վերականգնել և ճանաչել 0.12111 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992 թվականի կառուցված 167.64 քմ բնակելի տան, 18.00 քմ անասնագոմի և 36.00 քմ ավտոտնակի նկատմամբ ճանաչել Մարիետա Վաղինակի Եգանյանի /24/12/1965թ /, Վարդան Փայլակի Անտոնյանի /22/07/1991թ/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Լեռնանցք համայնք, 1 փողոց, տուն թիվ 13:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 25 » 12 2017թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. Շենք 6/4
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ''Տեղական ինքնակառավարման մասին'' օրենքի 49 հոդվածի և առաջնորդվելով Լեռնանցք համայնքի 2018թ-ի բյուջեն հաստատելու մասին ավագանու 25.12.2017թ-ի թիվ 41-Ն որոշմամբ (հավելված 1, 2)

1. Հաստատել համայնքի 2018թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«27» 12 2017թ. հեռ. 093-32-22-39

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնանցք համայնքում 2018թ.-ի հունվարի 1-18-ը անասնագլխաքանակի հաշվառման համար կազմել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Վիրաբյան Մարտիկ
2. Վարդանյան Գևորգ
3. Մացակյան Արաքսյա
4. Վարդանյան Սամվել (ավագանի)
5. Այդեյան Միհեր (անասնաբույժ)

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

հեռ. 093-32-22-39

«27» 12 2017թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017Թ.-Ի ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ 2018Թ. ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167 հոդվածով և 22 Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավար Լևիկ Աբգարյանի համաձայնությամբ, նրա 2017թ-ի չօգտագործած ամենամյա արձակուրդը տեղափոխել 2018թ.:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան